

զեր. այս մասը առանձին իջահամարում է գրչեն: Այժմ կը սկսի. «գովեն զլոյսն ի հօրէ յաւուր ծննդեան լուսոյ մօրն... (մասն «Երգեցէք» շարականին):

Էջ 295 եւ յջ. «Քաղուածք օրհնութեանց տօնից տէրունականաց եւ ամենայն սրբոց ըստ իւրաքանչիւրոց պատշաճից:

Գ. Տօնացոյց. այլ գրչէ՝ նոտրագիր, էջ 1—42. կը սկսի. ԻԴ. դեկտ. Ճրագալոյց Մննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Օհ. ԲԶ. Ուրախացիր...: Ի կատարածին կայ ծանօթութիւնս. «Չայս տօնս մի ոք ի իշխեսցէ խափանել, զի մինչեւ ցայսօր ի տղիաութենէ էր խափանեալ, եւ բազում քննութեամբ եւ գիտութեամբ եկն ի լոյս: Իսկ որ լըբի եւ հակառակի, պատասխանի տալոյ է առջի Աստուծոյ: Մեք անպարտ եմք: Փառք Աստուծոյ, զի ճշմարիտն յայտնեցաւ:

Էջ 43—60. ցուցակ Ա. եօթներեկաց:

Էջ 61—67 (խաղանիշ). Ի տօնի ամենատուր Երրորդութեան: Օրհ. ԴԿ. Յերիս անձինս բաժանեալ, եւ մի բնութիւն ոչ գատեալ, Երրորդութիւն պաշտելի, Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգի... (Կանոնս սկզբնակապ գրեթէ կը հիւսեն. ՅՈՀԱՆԵՍ ՈՐ ԵՐ ԱՐՔԱՅՆ ԽՆԴՐԵԱՅ: Հեղինակն է Գրիգոր Անաւարդեցի (տե՛ս Թ. 9, 54):

Էջ 68—74 (խաղանիշ). Ի տօնի ամենասրբոյ մարմնոյ եւ արեան Տեառն: Գերահրաշխորհրդոյ, անգին արեան եւ մարմնոյ...: Տօնին ամբողջ կանոնը. վերջին թուղթին անկումով՝ այժմ կը պակսի Համբարձիի վերջին տունը (տե՛ս Թ. 8, 55):

8 (31).

Շ Ա Ր Ա Վ Ն Ո Յ

ԺԵ.—ԺԶ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ (°): — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ (°): — ՆԻԻԹ՝ մագաղաք: — ԳԻՐ՝ բարբառ: — ԿԱԶՄ՝ նոր կաշեկազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ սկզբէն եւ վերջէն բարբառ ինկած. տեղտեղ պատաստում. այժմ խմանով նորագուած: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳԵՐ, ԶԱՐԳԱԳՐԵՐ՝ կան տեղտեղ: — ԽՈՐԱԳԻՐՔ, ՍԿՁԲՆԱՏՈՂՔ՝ կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ժե՛ծձ դար: — ՏԵՂԻ ԵՒ ԳՐԻԶ՝ անձամօր: — ՍԵՊՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Քաղաքի բանգարանի մը 140 համարով:

Մատենան է Շարակնոց, այժմ թերակատար: Վերջին թղթի վրայ արձանագրուած է. Ex libris D. Alexandri Azolowski, Leopoli.

9 (32).

Ե Ր Գ Ա Ր Ա Ն

1783:

ԹՈՒՂԹՔ՝ 82: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 21,6x17,5 հմ: — ՆԻԻԹ՝ բարբառ: — ԳԻՐ՝ նոտր: — ԿԱԶՄ՝ կիսալաք: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻԶ ԵՒ ՏԵՂԻ անձամօր: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1783:

Մատենան է՝ «Տեսք հասարակօրէն կռնեցեալ Երգարան դոմանս նորապէս շարագրեցեալ երգս զիշերայնոյ ժամուն, շարականս, մեսեղիս, եւ սոցին նմանս, առ ի լըցունս պակասութեանց ժամագրոյն, Շարակնոցի, եւ այլոց առ աստուածային պաշտօնն հարկաւորաց գրեանց: Պարունակօղ ի փառս մեծագոյնս Աստուծոյ, եւ սրբոց նորա, եւ ի յօգուտ սրբապիծոն աղօթասիրաց ընդօրինակեալ յամի ներմարմնութեան բանին 1783 եւ ի թուարկութեան Հայոց ՌՄԼԲ»:

1. էջ 1. Վերալցունս ոմանց երգոց, շարականաց, մեսեղեաց, որք ի Շարակնոցի եւ ժամագրքի նուազ գտանին: — Ի ճրագալոցի Մննդեան Տեառն, զինի Չարթուցեալքին: Երգ: Հայրն գրթած անուղական, յու զպայման վերադնութեան... (ընդ ամէնը՝ 4 տուն):

2. էջ 2. Ի ճրագալոցի Մննդեան Տեառն: Դու Բեթղէհէմ, տուն Եփրատոյ, Չես ինչ կըրտսեր յիշխան Յուզայ...:

3. էջ 3. Ի տօնի Մննդեան Տեառն. զինի Չարթուցեալքին երգ. Անմայր ծրնունդ Հօր անսկզբան, նկարագիր եւ կերպարան...:

4. էջ 4. Առաւօտու երգ յատուկ: Այսօր ծրնաւ որ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս Որդի... (մեսեղի):

5. էջ 5. Քարոյ (դանձ). Ժողովեալսս ի տաճար փառաց սրբութեանդ քոյ Հայրցեմք...:

6. էջ 7. Տաղ զՄննդեանէ Տեառն: Մանուկ ծրնաւ ի Բեթղէհէմ, ուստի ցրնծոյ Երուսաղէմ...:

7. էջ 8. Ի տօնի թրփատութեան Տեառն. զինի Չարթուցեալքին երգ. Ի յըզկրգրան սնօրէնութեան յութերորդում աւուր ծննդեան...:

8. էջ 9. Ի տօնի Աստուած յայտնութեան Տեառն. զինի Չարթուցեալքին երգ. Յնձատցուք առդ ամենեքեան, արք եւ իզուրք համանամարն...:

9. էջ 11. Ի Կեոսի Մատիկայարուն: Աւրախ լեր դուտոր Սիօնի, պատրաստեալ արդ ատառաստի...:

10. էջ 12. Ի մեծի Հինգշարաթու: Այսօր որբաւ օրինակաց հնոյ կրտակին եւ օրինաց...:

11. էջ 14. Ի մեծի Ուրբաթու: Գուշակութիւնք տեսանողաց նախանցելոցն օրինաց...:

12. էջ 16. Ի մեծի Շարաթու: Կենդանատուն ամենեցուն մեռանի վասն ամենեցուն...:

13. էջ 18. Ի Կիրակէ Չառկին: Յարեաւ Քրիստոս ի մեռելոց նախկին պրտուղ նրնջեցելոց...:

14. էջ 19. Ի տօնի Համբարձման Տեառն: Յեա փառաւորի յարութեան եւ ի լրման տնօրէնութեան...:

15. էջ 20. Ի Կիրակէ Պէնտէկոստէին: Ամենատուր Աստուած հօգի, տնօրէնութեան բում էակցի...:

16. էջ 22. Ի տօնի ամենատուր Երրորդութեան: Սրբադնատուր Երրորդութիւն, երբեակ եւ մի աստուածութիւն...:

17. էջ 23. Ի տօնի Մարմնոյ եւ Արեան Տեառն: Արդ օրհնեցուք ամենեքեան, եւ գովեսցուք միաբերան...:

18. էջ 24. Ի տօնի Այլակերպութեան Տեառն: Յայտնէ Յիսուս աշակերտաց զպայծառութիւն իւրոց փառաց...:

19. էջ 26. Ի տօնի Ս. Սաշին: Ի սկզբբանէ նախատղեցեր զխորհուրդ խաչին ապացուցեր...:

20. էջ 27. Ի տօնի եկեղեցոյ: Չուարձացիր հարսն Քրիստոսի, կաթուղիկէ եկեղեցի...:

21. էջ 28. Երգք ի տօնս սրբուհոյ Աստուածածնին: Ի տօնի մաքրեցութեան: Միայն մաքուրդ ի մէջ կանանց, փութաս մաքրի կերպիւ կանանց...:

22. էջ 29. Ի տօնի Աւետման Ս. Աստուածածնին: Աղերս քո, ով կոյս սրբազկեաց...:

23. էջ 31. Ի տօնի Այցելութեան Ս. Աստուածածնին: Անհամեմատ խոնարհութիւն սէր քո եւ եռանդ տղութիւն (ա՛յսպէս)...:

24. էջ 32. Ի տօնի Վերախոխման Ս. Աստուածածնին: Վերնականացն տենչ փառաց...:

25. էջ 34. Ի տօնի Մննդեան Ս. Աստուածածնին: Ծաղկեցաւ արդ արմատն Եսայ...:

26. էջ 35. Ի տօնի Ընծայման Ս. Աստուածածնին: Ընտիր նըէր Երրորդութեան...:

27. էջ 36. Ի տօնի Անարատ Յղութեան: Յաւիտենից Աստուած ընտրեաց...:

28. էջ 38. Հասարակ երգ կիրակէից: Անըսկիղբն Աստուած ամենից ըսկիղբն...:

29. էջ 39. Ի տօնի Ս. Հրեշտակապետացն: Դասք իննէկէ հոգեղինաց...:

30. էջ 40. Հասարակ երգ Առաքելոց: Նախ քան զըսկիղբն արարածոց...:

31. էջ 42. Երգ Ս. Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի: Կաթուղիկէ եկեղեցի, ցընծայ այսօր ի հանդիսի...:

32. էջ 43. Հասարակ երգ մարգարէից: Նախընտրեցեալք ի սկզբանէ...:

33. էջ 44. Հասարակ երգ վարդապետաց: Նախասահման կամն Աստուծոյ...:

34. էջ 46. Ի տօնի Ս. Պէնտէքէթոսի: Յերանկեաց երանագոյն...:

35. էջ 47. Միոյ Հայրապետի խոստովանողի: «ՅՈՒՐԱՅՆ սրբոյ նախընտրեցար...»:

37. էջ 50. Միոյ Հայրապետի մարտիրոսի: Տօնէ այսօր եկեղեցի զօր կատարմանն երջանկի...:

38. էջ 51. Բազում Հայրապետաց մարտիրոսաց: Փառք եւ պատիւ եւ զօրութիւն...:

39. էջ 52. Հասարակ երգ Ճգնաւորաց, կրօնաւորաց եւ խոստովանողաց: Ընտրելոց խումբք երջանկաց...:

40. էջ 53. Հասարակ երգ Թագաւորաց: Հրաշակերտողդ բոլորից...:

41. էջ 55. Ի տօնի Ս. Յովսէփայ Աստուածահօրն: Յովսէփ որդի մեծի Դաւթի...:

42. էջ 56. Հասարակ երգ Մարտիրոսաց: Ով երանեալ գունդ վրկայից...:

43. էջ 58. Հասարակ երգ Կուսանաց: Եկեղեցի կաթուղիկէ զհանդէս ձեր այսօր տօնէ...:

44. էջ 59. Հասարակ երգ այլոց Սրբուհեաց: Ընտիր որոշրդ Քրիստոսի...:

45. էջ 60. Ի տօնի Ամենից Սրբոց: Այսօր մայր սուրբ եկեղեցի...:

46. էջ 62. Ի յիշատակի համօրէն ննջեցելոց եւ յաւուրս Տաղաւարաց: Աստուած զըթած եւ հեշտալուր...:

47. էջ 63. Այլ երգ ննջեցելոց որ ասի յաւուրս ուրբաթաց ընդ ամն բոլոր: Ամենախնամ Տէր արարիչ, հանուրց ապուէն եւ յոյս...:

48. էջ 65—68. Ալէլուք, Առաւօտու երգ եւ Մեսեղիք եւ նմանք սոցին, որք ի ժամագրքում նըւաղին...:

49. էջ 69. Ի տօնի Ս. Գրիգորի Լուսաւորչին Մտանելոյն ի վերապն եւ Ելանելոյն ի վերապէն: Ուրախութեամբ այսօր տօնէ ազգն արամեան եւ հըռչակէ...:

50. էջ 70. Ի տօնէ Գիւտի նշխարաց Ս. Գրիգորի: Վաչ երջանկութեան արամեանց, զեր այլոց Ասիոյ ազանց...:

51. էջ 72. Ի տօնէ թրփատութեան Տեառն: Օրհնութիւն. Որ խոստացար, Տէր, ի քեզ Արրահամու զաւակ օրհնել ամենայն երկրի...: ՀԳ. ԴԿ. (իւր սարօքն). Անսկիղբն Աստուած անանուն բնութիւն... (Տունք՝ ԱՐՔԱՅՆ ԽՆԴՐԵԱՅ ԶԲԱՆՍ): Ճշ. եւ Հք. Կամալ յանձն առեր զօրէնս... (Տունք՝ ԿՈՍՏԱՆԴՆՈՍ):

Կանոնս հեղինակած է Գրիգոր Անաւարդեցի. հրա. Ս. Վ. Ամատունի, Հին եւ նոր պարականոն կամ անվաներ շարականներ, էջ 4—6:

52. էջ 75. Ի տօնի սրբուհոյ մօրն Աբղաթուղիկայ: Օրհնութիւն իւր սարօքն: Խնդայ քաղաքն երկնական տօնախմբութեամբ կուսական...:

53. էջ 77. Ի տօնի սրբոյ հօրն Պէնտէքէթոսի: Օրհնութիւն իւր սարօքն: ՅՈՒՐԱՅՆ սրբոյ նախընտրեցեալ, ի պաշտօն Տեառն կռնեցար... (տ՛ս § 35):

54. էջ 80. Ի տօնի ամենատուր Երրորդութեան: Օրհնութիւն իւր սարօքն: Յերիս անձինս բաժանեալ եւ մի բնութիւն ոչ

դատեալ...: Տունք՝ ՅՈՂԱՆՆԷՍ ՈՐ ԵՐ ԱՐ-ՔԱՅՆ ԽՆԴՐԵԱՅ:

Կանոնիս հեղինակն է Գրիգոր Անաւարդեցի. հրտ. Ամատուհի, անդ, էջ 108—111: Սիւրճեան, Նկարազեր, էջ 70—71:

55. էջ 84. Ի տօնի ամենայարգելի Մարմնոյ եւ Արեան Տեառն: Օրհնութիւն իւր սարօքն. Գերասրաշ խորհրդոյ անգին արեան եւ մարմնոյ...:

Գր. Անաւարդեցոյ. հմտ. Վիեննա, Թ. 863. 27ա: Վատիկ. Թ. 26, 17ր եւն:

56. էջ 87. Ի տօնի Այցելութեան Ս. Աստուածածնին: Օրհնութիւն իւր սարօքն. Օրհնեմք զօրհնեալդ ի կանայս, զկոյս եւ զմարդ ացելեալ... (ա՛յսպէս):

Հմտ. Վատիկ. Թ. 26, 21ր: 27. 20ա: 29, 11ա:

57. էջ 90. Ի տօնի Ամենայն Սրբոց: Օրհնութիւն իւր սարօքն. Անճառ քո զխառնութեամբ հայր հիմարկեր իմաստութեամբ...: Տունք Ա—Ք:

Կանոնիս հեղինակն է Գրիգոր Անաւարդեցի. հրտ. Ամատուհի, անդ, էջ 145—149:

58. էջ 96. Ի տօնի Ընծայման Ս. Աստուածածնին: Օրհնութիւն իւր սարօքն. Գովեմք զՀայրդ զըթութեան յորս ընդ մարդկան հաճութեան...: Տունք՝ ԳՐԻԳՈՐԻ Է ԵՐԳՍ ԱՅ(Ս):

Գրիգոր Անաւարդեցոյ. հմտ. էջմ. 732, 3ա—8ր (1322). Վիեննա, Թ. 863. 36ա—37ր. Վատիկ. 26, 30ա:

59. էջ 101. Ի տօնի Անարատի Յղութեան Ս. Աստուածածնին: Օրհնութիւն իւր սարօքն. Կարողարար զօրութեամբ Հայր հիմարկեր ընտրութեամբ...: Տունք՝ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՅ Է ԳՐԻ(գորի):

Գր. Անաւարդեցոյ. հրտ. Սիւրճեան, Նկարազեր, էջ 51—52:

60. էջ 105. Ծարական Ս. Յովսէփայ Աստուածահօրն. Մկ. Հր. Պարծանք տոհմին Արբազամու...:

61. էջ 105. Ծարական Ս. Գայեղանոսի. Մկ. Հր. Պրտակացեալ հարսին Աստուածորդոյն, եկեղեցոյ փառք վեհազիտակ...:

62. էջ 105. Ծարական Ս. Լաւրէնցիոսի. Մկ. Հր. Քաջդ նահատակ Քրիստոսի Ս. Լաւրէնիոս...:

63. էջ 106. Ծարական խոստովանողաց. Յիսուս պրտակ քոց սրբոց...:

64. էջ 107—126. Պաշտօն Նընջեցելոց (քաղուածք Ծարակնոցէն):

65. էջ 127—163. Լիթանայք զանազանք ըստ ժամանակի ասելիք:

ա. Յաղագս ամենասուրբ Անուանն Յիսուսի:

բ. Առ ամէնօրհնել կոյսն Մարիամ Աստուածածին (էջ 130):

գ. Առ սուրբ հայրն Պէնէտիքթոս (133):

դ. Լիթանիայ Ամենայն Սրբոց. կից ազօթքներ (137—144):

ե. Լիթանիայ վասն Մեռելոց (145):

զ. Լիթանիայ առ Ս. Պահապան Հրեշտակն (148):

է. Լիթանիայ առ Ս. Յովսէփ (153):

ը. Լիթանիայ յաղագս Ամենայարգելի Սրբազնութեան (155):

թ. Լիթանիայ առ Ս. Աստուածածինն ի սրբոց զրեանց (159):

ժ. Molitwa do S. Wawryinca (163) եւ այլն:

10 (33).

ԵՐԳԱՐԱՆ

1785:

ԹՈՒՂԹՔ՝ 161: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 17.5 X 11.5 հմ.: — ՆԻԻԹ՝ բուլք: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ԳԻՐ՝ նտրագիր: — ԳՐԻԶ ԵՒ ՏԵՂԻ՝ անձամբ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1785:

Մատենա է. Երգարան գնորդապէս շարագրեցեալ երգս տօնից տէրունականաց ամէն երանուհւոյ կուսին եւ այլոց սրբոց, որք ի գիշերայնում ժամու կանոնականում փոխանակ երգոցն Առաւօտ լուսոյ եւ Աշխարհ ամենայն ասին, ըստ եղանակի այնք երգոցն, որ սկզբնաւորի Աստուածածին ամէնօրհնեալ զպաղատանս մեր, պարունակող ի մեծազոյն փառս Աստուծոյ եւ սրբոց նորա փոքրաշխատ զբնութեամբ ընդօրինակեալ յամի ներմարմնութեան Բանին Աստուծոյ 1785:

Ձեռագիրս կը գտնուի Համալսարանի Գրատան Թ. 989 տակ. զոր եւ չկրցայ տեսնել. վերոյիշեալ տեղիքները յառաջ բերած եմ Փ. Մակլերէ REA 7 (1927), էջ 134—135: Արտագրուած ըլլալու է նախորդ ձեռագրէն, ուստի եւ բովանդակութեամբն՝ նոյն:

11 (34).

ՃԱՇՈՑ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅ

ՌՃԻԶ = 1677

ԹՈՒՂԹՔ՝ 370: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 32.3 X 20,2 հմ.: — ՆԻԻԹ՝ բուլք, հաստ եւ ողորկ: — ԳՐԶՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԿԱԶՄ՝ փայտեայ կանաչ քաւիչով պատուած. ժամանակաւ կոստղուած, այժմ արծաթեայ մասերէ կողպտուած: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ կազմալոյծ, շատ ցեցակիր: Թղթեայ պակասակները խոնարհեցնել վնասուած: — ՆԿԱՐՔ՝ ֆակտիւր Ս. Ոնոփրիոսի յաջող պատկերը, ներկայացուած ամպերու վրայ ծերադիր, մագերով եւ մօրուֆով ծածկուած. տակը վառանակի վր, գոր բռնած եմ երկու երեշտակներ, մէջը գրչիւն 10 տող յիշատակարանը: — ԿԻՍՍՆՈՐԱՆՔ՝ էջ 1 եւ 188: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԳՔ ԵՒ ԾԱՂԱԿԻՐՔ՝ մեծ բուլով, երկզոյն: Ազուցուած կան երկու տպագիր սեւագիր պատկեր:

ներ, մին (էջ 168) «Անա Այրգ»: Եւ երկրորդ Յիսուս մանուկ, խաչը ձեռքին (էջ 179): — ԳՐԻԶ՝ Ոնոփրիոս կրօնաւոր: — ՏԵՂԻ՝ Լվով: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1677: — ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Լվովի Հայոց Արքեպիսկոպոսարանի:

Մատենա է՝ Ճաշոց եւ Սորհրդատեար Լեհահայոց:

Ա. էջ 1—20. Ծննդեան ճրագալոյցի ընթերցուածք:

էջ 22—64. Կանոն ջուր օրհնելոյ յաւուր Յայտնութեան:

էջ 64—668. Ժամամուտք եւ ընթերցուածք:

Բ. (ընդ մէջ 188/189ի ազուցուած): էջ 1—26. Սորհրդատեար: Լուսանցքի վրայ կը տեսնուին տեղիս տեղիս մանր բնագրական սրբագրութիւններ:

Գ. էջ 1—10 (ընդ մէջ 358/359ի ազուցուած) Կանոն նշան հաստատութեան յետ երկոցուց հաւանութեանց (այն է՝ Կարգ երկոցուց հաւանութեանց Մատանոյ, պրակի, հանգերձ օրհնութեամբ Մատանոյ, Հալաւի եւն): Պատկերոց ուղղուած հարցաձուեք եւ պատասխանիք եւն (էջ 3բ—4ա) հայագիր լեհերէն են:

Դ. էջ 668—671. Ծանապարհօրդական ազօթք:

Սկիզբը պահպանակ թղթի վրայ մեծ շղարով գրուած «Երբ վասն մեռելոց», 19 տուն, Dies illa, dies irae երգին թարգմանութիւնը:

ՅԻՇԱՏԱՆԱՐԱՆ. Ձեռագիրս ճակատին ներկայացուած պատկերին տակ, վահանակի մէջ կը կարդանք, գրուած ըստ մեծի մասին փակագրերով եւ ոսկեջրով:

Պատարագամատոյց ըստ Հայաստանեայց եկեղեցոյ օրհնութեամբ ||| (փակագիր) դատող. ի ձեռն աշխատանաց Տէր Օնոփրիոս կրօնաւորի (փակագիր). Պր. Աւրանին որդւոյ յամի Բանին Աստուծոյ ՌՃԻ. Եւ ըստ Հայկական սերի ՌՃԻԶ. Օգոստոսի կատարեցաւ:

12 (35).

ՃԱՇՈՑ ՊԱՏԱՐԱԳԱՏԵՏՐ

ԺԸ. դար.

ԹՈՒՂԹՔ՝ 189: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 25,7 X 18,6 հմ. — ՆԻԻԹ՝ բուլք: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԿԱԶՄ՝ կաշեկազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լուս: — ԽՈՐԱԿՐԱՆՆԵՐ, ԿԻՍՍՆՈՐԱՆՆԵՐ՝ չկան: — ԽՈՐԱԿԻՐՔ ԵՒ ՍԿԱՐՆԱՏՈՂՔ՝ կարմիր: — ԳՐԻԶ, ՏԵՂԻ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ՝ անձամբ. հաւանութիւն ժԸ. կամ ժԹ. դարէն:

Մատենա է՝ Ճաշոց—Պատարագատեար: 1. Թղ. 1—148. Ճաշոց:

2. Թղ. 149—196 դուրս հանուած է. այժմ ազուցուած փոխարէն 1885ին ի վիեննա ապուած խորհրդատեարն վասն Լեհահայոց:

13 (36).

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅ ԼԵՀԱՅԱՅՈՅ

1725:

ԹՈՒՂԹՔ՝ 52: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 38 X 25,8: — ՆԻԻԹ՝ բուլք: — ԳԻՐ՝ բոլորգիր—շղարկ: — ԳՐԶՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ԿԱԶՄ՝ լարակազմ, բարձրախառնակ բանուածքով: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լուս: — ԶԱՐԳԱԳԻՐ՝ խոշորածել: — ԳՐԻԶ՝ Քրիստափոր Յանուսեանց: — ՏԵՂԻ՝ (Լեպոլի)՝: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1725:

Մատենա է. Պատարագամատոյց ըստ արարողութեանն եւ ծիսի եկեղեցոյ Հայոց. Գրեցեալ ի Քրիստափորէ Յանուսեանց: Anno Domini 1725, die 21 martij:

Թղ. 2ա. Պատարագ յատուկը ըստ ժամանակի, որը սկսանին ի Ծննդեան ի տօնի Ծննդեան Յիսուսի Քրիստոսի: Ետայի Ը. Մանուկ ծնաւ մեղ... (Ընթերցուածք եւ Աւետարանք եւն):

Թղ. 9—32. Կարգ պատարագի ըստ Հայաստանեայց եկեղեցոյ (ըստ կերպի Լեհահայոց):

Թղ. 33—34 (ուրիշ գրչէ). Չորս Աւետարաններու սկիզբի մասերը, թափորի ժամանակ կարդալու համար:

Թղ. 35—48. Ճաշոցի մասեր յետ Յարութեան շրջանի:

Թղ. 49ա. Oratio post missam:

Թղ. 50ա (նոր, շղարկ). Կարճ շնորհելոյ ի քահանայապետէ հանդիսաւորապէս հըրչակելոյ գնորդութիւն քառասուն տուրց:

14 (37).

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ ԼԵՀԱՅԱՅՈՅ

ՌՃԶԱ = 1732:

ԹՈՒՂԹՔ՝ (°): — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 31 X 19 հմ.: — ՆԻԻԹ՝ բուլք: — ԳՐԶՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ԳԻՐ՝ նտր: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լուս: — ԶԱՐԳԱԳԻՐՔ՝ պարզ: — ԽՈՐԱԿԻՐՔ ԵՒ ԽՈՐԱԿԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻԶ՝ անձամբ: — ՏԵՂԻ՝ Քուրքու ֆալս (Քուրքի): — ԺԱՄԱՆԱԿ՝ 1732:

Մատենա է՝ Սորհրդատեար կամ Պատարագամատոյցս ըստ ծիսի Հայոց եկեղեցոյ, գրեալ ի Քուրքու քաղաքն յամի Տեառն 1732. Եւ Հայոց թվականիս ՌՃԶԱ. Յուլիսի: Ստեփանոս Միքոյայեվիչին է:

Թղ. 1ա. Պատարագամատոյց (ըստ կերպի Լեհահայոց). կից Ճաշոց:

15 (38).

Պ Ա Տ Ա Ր Ա Գ Ա Մ Ա Տ Ո Յ Ց Լ Ե Հ Ա -
Հ Ա Յ Ո Ց

1742:

ԹՈՒՂԹՔ՝ 200: — ՄԵՇՈՒԹԻԻՆ՝ 33,3 X 20,2
ԽՄ: — ՆԻԻԹ՝ ԲՈՒՂՔ: — ԳԻՐ՝ ԲՈՒՂՔԻՐ: — ԿԱՁՄ՝
Կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԱՏԱՐԻ՝ ԲՂ.
182—200: — ՁԱՐԴԱԳԻՐՔ՝ պարզ: — ԽՈՐԱԳԻՐՔ
ԵՒ ԽՐԱՏԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ՝ ՏԵՐ ԲՐԻՍՏԱ-
փոք Ֆառուխեանց (°): — ՏԵՂԻ՝ Լեօպոլիս: — ԺԱ-
ՄԱՆԱԿ՝ 1742:

Մատանս է՝ «Պատարագամատոյց կամ
Խորհրդատեւոր քստ ծիսի եւ արարողութեան
եկեղեցւոյ Հայոց. յորում ընթերցուածք եւ
աւետարանք տօնից եւ սրբոց մանաւանդա-
կանաց յատկապէս գրին արդեօք իսկ այլոց
սրբոց որոց եւ իցեն սեռի Հասարակօրէն
վասն Համառօտութեան: Տրամադրեցեալ եւ
կարգաւորեցեալ հոգունականօրէն յամի ներ-
մարմնութեան Բանին 1742, նոյեմ. 29:
Ի Լէօպոլիս»:

- 1. էջ 125—156. Պատարագամատոյց:
 - 2. էջ 3—124, 157—355. Ճաշոց:
 - 3. էջ 356—357 (այլ գրչէ, նոտարագիր).
Պատարագ զուրր Յովհաննէ Նեմորուձենէ
կանոնիկոսէ Պրակացւոյ. Մայիսի ԺԶ:
 - 4. էջ 357—359. Պատարագ զսրբուհւոյն
Մարիամու Մազդազինացւոյն: Յուլիսի ԻԲ:
 - 5. էջ 360—366. Յանկ պատարագաց:
- ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. էջ 355. «Տէր Բրիստափոր Ֆա-
ռուխեանց», հաւանօրէն գրչէր:

(Շարունակելի): 2. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՆԵՐՈՂՈՒԿԱՆ ՓՈԽՈՒՆԵՆԸ ԲՈՒՆԵՐ
ՀԱՅԵՐԷՆԻ ՄԷՋ

(Շարունակութիւն):

Խուռուքիւն տես Բառանքիւն:
Խուռասն «վերնագետին տակէն հա-
զած կարծ եւ անթեւ կանացի բաճկոնակ» <
Փրանս. corsage «գգետուն վերին մասը.
2. ուսերէն մինչեւ կոնքը, իրան»:
Խուռսէ «սեղմիրան» < Փրանս. corset:
Խուրփա (վն. կուրփա, ննխ. Բուրփա) «խա-
ղաթղթի մէջ սրտի ձեւ կարմիր նշան ունե-
ցող թղթերը», թրք. Կոթ գորթ, նյն. Կոթա
նոյն նշ. < իտալ. coppa (եզ.), coppe
(յոգ.), որոնց վրայ տե՛ս քաղաքի բառին
տակ:

[Խօլան (վն. կօլան) «ձիու կամ իշու-
մէջքի փոկ, փորքաշ» < թրք. قولاڭ qolan
նոյն նշ. կապ ունի՞ իտալ. collana «վզնոց,
վզի ոսկի շղթայ»? յամենայն դէպս մեր բառը
թուրքերէնէ է:]

Խօնն «կօշիկին վերը» < թրք. قونچ qonj
կը թուի եւրոպական փոխառութիւն. բայց
մայր ձեւը ինձ անյայտ է:

Կ.

Կագ «քարիւղ, pétrole», թրք. ګاز gaz
< Փրանս. gaz, իտալ. gas «ցնդական մար-
մին»։ նախ ո՞ւր յառաջացած է «քարիւղ»
իմաստը:

Կագ «չղարչ» < Փրանս. gaze:
Կագիւն (նաեւ վն.) «եւրոպական սրճա-
րան, դրօսարան»։ թրք. قازينو qazino <
իտալ. եւ Փրանս. casino. բառը բնիկ իտա-
լերէն է, որմէ անցած է Փրանսերէնի. իսկ
մեր ձեւը որմէ՞ է:

Կագոզ «պիքարոյօնաթ-տը-սուտի եւ ա-
սիա-թարթրիքի բաղադրութեամբ խառն ա-
նուշահամ ըմպելիք» < իտալ. gasoso, gasosa
«ցնդական», որ եւ Փրանս. gazeuse (իգ.):

Կալարիա «պատուհանին գլուխը հաստա-
տուած երկար փայտ՝ որմէ վարագոյրը կը
կախեն» < իտալ. galleria, վենետիկեան բար-
բառով galeria. նոյն նշ.:

Կալէքա տես Բալէքա:
Կալիպարոսի «կարմիր թանաք. 2. կար-
միր թանաք պատրաստելու նիւթը»։ անշուշտ
օտար է, բայց աղբիւրը անձանօթ, նյն. եւս
γαλιπαριδι.

Կալվանիզ «մետաղեայ առարկաներու
վրայ տեսակ մը ջնարակ քաշելը» < Փրանս.
galvanisme «կալվանականութիւն»:

Կալօն «1000 տրամ պարունակող մեծ
չիշ. աճկ. պիւլիք» < իտալ. gallone կամ
Փրանս. gallon «հեղուկաչափ մ՛է, որ կ՛առնէ
4½ լիթր»:

Կախ «թռչունի վանդակ». կը գործա-
ծուի միայն Նոր-Նախիջևանի բարբառին
մէջ. < իտալ. gabbia, որ երկրորդական
ձեւն է gabbia բառին. նոյնէն է նաեւ Փրանս.
cage «վանդակ». բոլորին մայրն է լատ. cavea,
որմէ կաղմուած է աճկ. قافس qafes «վան-
դակ»:

Կայկուռք «կտրիճ, փնաւոր (յատկա-
պէս ձիու համար կ՛ըսուի)»։ անշուշտ օտար
է. բայց աղբիւրն անձանօթ. հմմտ. իտալ.
gagliardo «կորովի, կայտառ»:

Կանելա «տակառի փայտեայ խցան» <
իտալ. cannella «ծորակ (յատկապէս տա-
կառի)»:

Կանք «տեսակ մը նուրբ կաշի՝ որով
ձեւնոց եւ կօշիկի երես կը պատրաստեն» <
իտալ. guanto (այլ է Փրանս. gant) «այդ կա-
շիով պատրաստուած ձեւնոց»:

Կառկառա (նաեւ վն.) «խաղաչ, կո-
կորդը հեղուկ դեղով մը ողողելը. 2. կո-
կորդը ողողելու դեղ» < արաբ. ګرګر gār-
gara, որ նոյնպէս յունարէնէ առնուած պիտի
ըլլայ, ինչպէս Փրանս. gargarisme եւ իտալ.
gargarismo հոմանիշները:

Կառնիքու «մտեղէն կերակուրի հետ ու-
տելու համար՝ յատկապէս պատրաստուած
եւ կերակուրին վրայ անցուած կանաչեղէն-
ներ, ինչ. խաշած գետնախնձոր, լուրիա,
սոխ եւն» < Փրանս. garniture, իտալ. guar-
nitura «զարդ, կերակրի կառնիթու»:

Կառտիան տես Վառտիան:
Կալպա «մեծ գաւաթ». ծագումն ան-
յայտ է. հմմտ. իտալ. cavata «փորուածք,
փոս»:

Կըլառնէք կամ կըլառնէքա (նորերը կը
հնչեն Բըլառնէք, Բըլառնէքա) «տեսակ մը
փշողական նուազարան» < իտալ. clarinetto.
փշողական էր իտալ. *clarinetta ձեւ մը՝ որ
չեմ գտած. մէկ կողմ կը մնայ Փրանս. clari-
nette հոմանիշը:

Կըլիսէրին «քաղցրի», որ եւ կըսուի
Բըլիսէրին < Փրանս. glycérine:

Կըլօյ «ճրագի գնդաձեւ լուսամփոփ» <
Փրանս. globe «գունտ, երկրագունտ, ճրագի
գնդաձեւ լուսամփոփ»:

Կըսամ «փոքր ծանրութեան չափ մը» <
Փրանս. gramme:

Կըօն «տեսակ մը մետաքսախառն թան-
կազին կտոր՝ վէտվէտուն գոյնով, որմէ հա-
րուտ կանայք շրջադրեալ կը պատրաստեն».
անշուշտ եւրոպական բառ է, բայց մայր ձեւը
անձանօթ:

Կըսալիէր «տեսակ մը եւրոպական պա-
նիր» < Փրանս. gruyère, իտալ. formaggio di
Gruiera, որ կու գայ Չուլցերիոյ համանուն
քաղաքին անունէն, նոյն պանիրը առաջին
անգամ հոս պատրաստուելուն պատճառաւ:

Կըսո «յարդարանք, արդուզարդ, զգես-
տի եւն գեղեցիկ ձեւ, ճաշակաւորութիւն»,
կըսուի «ձեւաւոր, շիք, ճաշակաւոր», թրք.
gusto < իտալ. gusto «ճաշակ»:

Կըրաքար. «գրչի երկայնութեամբ պող-
պատէ քառակուսի բարակ ձող, դործի մը՝
որով աղամանդին շուրջը գտնուած ոսկին կը
յղկեն». գործածական է Ակնայ բարբառին
մէջ (տե՛ս ձանիկեան, Հնութիւնք Ակնայ,
էջ 347) < Փրանս. grattoir «քերիչ, գրչա-
հատի նման գործիք մը՝ գրուածքը թուղթին
վրայէն քերել ջնջելու համար»:

Կըրասո «օղիի թունդութեան, այսինքն
պարունակած ալքոլին աստիճանը» < իտալ.
grado «աստիճան»:

Կըրօս «մեծաքանակ (վաճառում կամ
զննում ապրանքի). 2. տասներկու երկոտաս-
նեակ» < իտալ. grosso «խոշոր», in grosso
«մեծաքանակ (վաճառում)», grossa «12 եր-
կոտասնեակ»:

Կիւվէրթէ «տախտակամած նաւի կամ
չողենաւի», թր. ګیګرته gügerte, աղաւ. gü-
verte, նյն. ګیګرته < իտալ. coverta «նոյն
նշ.» կազմուած covrire «ծածկել» բայէն:

Կլմուր, կլիմուր, կլմուր «տանը եր-
դիքէն կախուած շղթայ մըն է՝ որ կ'իջնէ
ճիշտ տանը մէջտեղը գտնուած օճախին
վրան. շղթային ծայրը կայ երկու կէտ. ա-
սոնց կ'անցնեն կերակուրին ամանը՝ որ
կրակին վրայ այսպէս կախուած կը մնայ ու
կ'եփի». գործածական է Տրապիզոնի եւ Համ-
չէնի բարբառին մէջ. լազերէն եւս կ'ըսուի
«Կերեմուլի, կրեմուլի, կերմուլի, կլեմուրի,
լեմուրի. անշուշտ եւրոպական բառ է.
հմմտ. Փրանս. crémaillère նոյն նշ. բայց ինչ
ճամբով մտած է՝ յայտնի չէ:

Կուկուրն «յատկապէս շորցուած եւ պա-
հուած գեղձի կորիզ, որով տղաքը խաղ կը
խաղան» < չէ իտալ. cucuzza «գամի եւն
գլուխ, դուրմ» բառէն, այլ նյն. ګوکګوګու
«կորիզ»:

Կօզմատիկ «պէխերը աճեցնելու եւ կո-
կելու համար պատրաստուած տեսակ մը
կաշուն եւ անուշահոտ նիւթ» < Փրանս. cos-
métique «մարմնի արտաքին գեղեցիկութիւնը
պահելու կամ աճեցնելու համար պատրաս-
տուած ամէն տեսակ նիւթ»:

Կօմէլաստիկ (վն. Բօմէլաստիկ) «գրու-
ածքը ջնջելու յատուկ սեռին» (զպրոցականի
բառ) < Փրանս. gomme élastique «ձգական
խէժ»:

Կօնէլա տես Բօլէնա:
Կօնէլա տես Բօնէլա: